

ՎՐԱՑԵՐԷՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ

Յովհան Ոսկեքերանի պատարագամատուցի. կազմեց
Փիլիմոն Զորիձէ. պարտիտուր № 1. Տփխիս. տպ.
Մ. Շարաձէ, 1895:

Վրաց մէջ վերջերս սկսել է մի շարժում դէպի երաժշ-
տական գիտութիւն. հասակաւոր անձինք խմբերով ուսա-
նում են պ. Փ. Գորիձէ մասնագէտ երաժշտի մօտ եւրո-
պական երաժշտութիւն և խումբ խումբ բաժանուելով բա-
ղաբիս զանազան եկեղեցիները՝ բառաձայն երգում են պատա-
րագի արարողութիւնը առանց որեւէ վարձատրութեան. ահա՛
այդ տեսակ խմբերի համար պ. Գորիձէն հրատարակել է
իւր յիշեալ աշխատութիւնը, որի մի օրինակն ուղարկուած
է մեզ:

Այս առիթով պէտք է ասենք, որ մեզանում էլ ար-
դէն սկսել է մուտք գործել պատարագի արարողութեան
բառաձայն երգեցողութիւնը, որի անդրանկութեան պատի-
ւը պատկանում է ներսիսեան դպրոցին: Այդ դպրոցի եր-
գի ուսուցիչ պ. Մ. Եքմալեանը նոյնպէս պատրաստել է
պատարագի արարողութիւնը եւրոպական նօտաներով, որ
շուտով մամուլի տակ պիտի մտնի:

Մենք չենք կասկածում, որ պ. Եքմալեանը լաւ պատ-
րաստուած մասնագէտ է և հմուտ իւր գործին, նորա պատ-
րաստած խումբն արդէն ապացոյց է մեր ասածին, բայց ինչ
վերաբերում է տպագրութեամբ ընդհանրացնելուն նորա
կազմած պատարագի բառաձայն երգեցմունքը՝ այդ մի փոքր
վաղաժամ է թուում մեզ:

Յայտնի է, որ հայոց եկեղեցական երգեցողութիւնքը,
թէպէտ հիմնական մասերով ամենուրեք միանման է, քիչ
բացառութեամբ, սակայն բաւական տարբերում են նորա
ընդհանրապէս. այսպէս՝ բաւական տարբեր է ռուսահայ ե-

կեղեցիների երգեցմունքը տաճկահայերից, նոյն իսկ տարբեր են երգում ռուսահայերի պլ և պլ եկեղեցիներում։ Տփլիսինը պլ է, Բագուինը պլ, Ախալցխայինը պլ և Ռուսաստանի կողմերին պլ։

Այս ամենի մէջ միակերպութիւն մտցնելու համար՝ պէտք է բոլոր կողմերի երգեցմունքներից ընտրել ամենալաւ, ներդաշնակ հնչող կտորները, պէտք է ընտրել, սյսպէս ասած, միջին երգեցողութիւնը և այնպէս ընդհանրացնել, որ խորթ չհամարուի ոչ մէկ կողմին։

Այս նպատակի համար անհրաժեշտ կլինէր նախապէս մի մասնաժողով կարգել գլխաւոր տեղերի հմուտ երգեցողներից և երաժիշտներից, զոեւ մաքուր, հին եղանակները և վերջնականապէս որոշելով ընդունելին՝ այն եղանակները ձայնագրելով տպագրութեան յանձնել և ընդհանրացնել։

Եկեղեցական երգեցմունքը գիրք է, որ մաշուի՝ փոխեն։ Հազարաւոր անձինք գիտեն եկեղեցական երգեցողութիւնը և միանգամ նոցա իրենց գիտեցածը մոռացնելու և նորը ուսուցանելու համար՝ անհրաժեշտ կլինէր, որ սյգ նորը իրօք մի հիմնաւոր փոփոխութիւն լինէր։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԱՂԲԱՏԱ-
ԽՆԱՄ ԵԿԵԼԵՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ (1872
ապր. 1—1893 ապր. 1)—կազմեց Ա. Գալստեանց,
Բագու. 1895.

Բագուի հայ հասարակութեան պատիւ բերող հաստատութիւնների մէջ վերջին տարիներս ամենից շատ խօսակցութեան առարկայ էր դառել Աղբառատանամ Հոգաբարձութեան հաշիւները, որոնց մասին աւելի շատ գրուեց լրագիրներում, քան թէ իսկապէս պէտք էր։ Հոգաբարձութեան հաշուառեո անդամներից մէկի կողմից մանաւանդ բաւական խիստ ակնարկութիւններ կային այդ